

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ (ԷԶՄ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

I. Արմավիրի մարզի Արաքս (ԷԶՄ.) համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ (ծածկագիր 1.2-1)

Քարտուղարը կազմակերպում է աշխատակազմի գործավարությունը, նամակագրությունը, արխիվային գործը և աշխատակազմի տեխնիկական սպասարկման աշխատանքները: Իրականացնում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և ապահովում է նիստերին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը: Կազմակերպում և ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը:

Կազմակերպում է համայնքի ղեկավար որոշումների, կարգադրությունների նախապատրաստումը Կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից քաղաքացիների ընդունելությունն ու հսկողություն է իրականացնում, նրանց առաջարկությունների դիմումների ու բողոքների քննարկման ու ընթացքի նկատմամբ: Վերահսկողություն է

իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային, կարգապահական ներքին կանոնների ապահովման նկատմամբ, օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը: Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Աշխատակազմի քարտուղարը ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

Նշված պաշտոնի զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբերի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա ՀԾ ստաժ և ՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն 5 տարվա հանրային ՀԾ ստաժ և ՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին 4 տարվա ընթացքում քաղաքացիական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

բ) Համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատալու ունակություն: Պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

գ) Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս (ԷԶՄ.) համայնքապետարանի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2)

Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքները, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ, և նրանց մասին բոլոր տվյալները

տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար: Իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի, և վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին:

- Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջում է՝

- միջնակարգ կրթություն
- պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաչեշտ իմացություն.
- համակարգչով և տեղնիկական միջոցներով աշխատելու ունակություն
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:

Դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները համայնքապետարանի աշխատակազմ կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս).
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին:
- հայտարարություններ ( ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս):
- արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենները՝ իսկականի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք:
- մեկ լուսանկար 3x4 չափի.

- անձնագրի պատճենը: Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011թվականի դեկտեմբերի 15-ի N1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթղթերը: Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցութայինները կկայանան 2017թ. դեկտեմբերի 1-ին ժամը 12<sup>00</sup> և 14<sup>00</sup>-ին, Արաքսի համայնքապետարանում (հասցեն՝ Արմավիրի մարզ գ. Արաքս Դրոյի փող. 2 շենք):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10<sup>00</sup>-ից - 17<sup>00</sup> -ը բացի շաբաթ և կիրակի օրերից :Դիմումներն ընդունվում են ՀՀ Արմավիրի մարզի Արաքս (Էջմ.) համայնքապետարան, հեռ./077/ 99-99-30, /098/ 41-28-27 կամ Արմավիրի մարզպետարան, Աբովյանի փ. 71, հեռ. 0237-2-07-70: Մրցութային մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Արաքս (Էջմ.) համայնքապետարան, Դրոյի 2, հեռ./077/99-99-30:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2017 թվականի նոյեմբերի 15-ը: